

Պաւլոս Առաքելոց: Իրենց հովիւն է Ծերունի կանոնիկոսն Ֆլորիան Միդուլքի, որուն մի մի օգնական տրուած է ի Չեռնովից եւ ի Սուչավա:

Այս միացեալ Հայք այսօրս իբրեւ լեհ կ'ապրին¹⁸³, եւ միայն հայ եկեղեցին եւ հայերէն պատարագը կը յիշեցընեն իրենց նախնաբար Հայ ազգէ ըլլալը:

Վերջին ժամանակներս Հռոմ համոզեց լեմպէրկի հայ կաթողիկեայ Արքեպիսկոպոսն, որ վերջնականապէս եւ ամբողջապէս միանայ նաեւ յարարողականս լատին եկեղեցւոյ հետ եւ լատիններէն պատարագ մատուցանեն, որ եւ պիտի ըլլար, եթէ այս վերջին ըոպէին այս լեհախօս Հայոց մէջ ազգայութեան կայծը չբորբոքէր, եւ իրենց Առաջնորդին ուղղած թղթով չպահանջէին՝ որ իրենց թող տրուի հայ ազգայնութեան վերջին յիշատակն՝ հայերէն պատարագն, ապա թէ ոչ՝ արեւելեան հայ եկեղեցւոյ կ'անցնին:^{*}

* Ճշդիւ ասոր հակառակն նանդիպած է՝ որչափ մենք գիտենք. այսինքն՝ Հռոմ լեմպէրկի հայ Արքեպիսկոպոսին հարցուցած է՝ թէ ինչո՞ւ հայ կղերն իւր սեպական ծէսը չի պահեր ի Կալիցիա. որուն պատասխան տրուած է՝ թէ դարեր գործած են այս չարիքն. որուն առջեւ պնդուլ շատ դժուարին է: Ծ. Թ.